Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 14

Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների
հանրային խորհրդի 2025թ. հոկտեմբերի 28-ի նիստի

ք. Երևան

սկիզբ՝ 28 հոկտեմբերի 2025թ., ժ. 14:35
ավարտ՝ ժ. 16:30

Մասնակցում էին՝ Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհրդի) 11 անդամներից 7-ը:

Բացակայում էին՝ «Ֆլայուան Արմենիա» ավիաընկերության խորհրդի նախագահ, Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանը, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մ. Սարգսյանը, «Փի-Էյջ-Փի Փարթնըրզ» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Պետրոսյանը և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի վիճակագրության ամբիոնի վարիչ Ա. Քթոյանը:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Հովակիմյանի փոխարեն մասնակցում էր Էկոնոմիկայի նախարարության տնտեսական հետազոտությունների վարչության պետ Ա. Հայրապետյանը, Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ Գ. Պետրոսյանի փոխարեն՝ Տ. Գրիգորյանը, իսկ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պրոռեկտոր Հ. Ծպնեցյանի փոխարեն՝ Ա. Պետրոսյանը:

Հրավիրված էին.

ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատի) նախագահի տեղակալներ Գ. Անանյանը և Ա. Սաֆյանը, Վիճակագրության պետական խորհրդի անդամներ Վ. Արևշատյանը, Լ. Պետրոսյանը, Ն. Բաղդասարյանը, Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Լ. Մելիքյանը, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, Տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը և Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ Կարինե Բադալյանը, Էկոնոմիկայի նախարարությունից՝ Դավիթ Տեր-Գուլանյանը, Անուշ Բաբայանը և Անահիտ Մկրտչյանը:

Նիստի արձանագրությունը **վարում էր** Հանրային խորհրդի քարտուղար, Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Գ. Նշանյանը:

Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.

1. «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծ

2. Այլ հարցեր:

Հանրային խորհրդի նախագահ Ա. Անանյանի գրավոր համաձայնությամբ նիստը վարում էր ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ, Հանրային խորհրդի անդամ Ս. Մնացականյանը:

Բացման խոսքով հանդես եկավ պարոն **Ս**. Մնացականյանը:

Քվեարկության դրվեց նիստի օրակարգը:

Հանրային խորհրդի 7 անդամների կողմ քվեարկության արդյունքում այն **հաստատվեց**:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ՝ համաձայն օրակարգի, Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը համառոտ ներկայացրեց «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի վիճակագրական ծրագրի» (Ծրագրի) նախագիծը:

Պարոն Մնացականյանը նշեց, որ վիճակագրական տեղեկություն օգտագործողների պահանջարկն ուսումնասիրելու նպատակով՝ Ծրագրի նախագիծն առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով Արմստատի պաշտոնական կայքի Գլխավոր էջի Նորություններ բաժնում զետեղվել էր 16.06.2025թ.-ին, ինչպես նաև կարծիքի էր ներկայացվել ընտրանքային կարգով ընտրված հիմնական վիճակագրական տեղեկության 128 օգտագործողների (պետական մարմիններ, գիտակրթական հաստատություններ, դատահրավական մարմիններ, բանկային համակարգ, գործարար շրջաններ, հասարակական ու միջազգային կազմակերպություններ, զանգվածային լրատվամիջոցներ և այլն):

Ծրագրի նախագծի առնչությամբ պատասխան-գրություններ ստացվել էին 40-ից կամ նրանց 31.3 %-ից: Ընդ որում, պատասխան-գրությունների մեջ.

- առաջարկություններ և դիտողություններ ներկայացրել էին 22 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 55 %-ը,
- առաջարկություններ և դիտողություններ չէին ներկայացրել 18 վիճակագրական տեղեկություն օգտագործողներ կամ նրանց 45 %-ը:

Ի լրումն վերոնշյալի, Արմստատը 14.10.2025թ.-ին ՎԿ/2-18/3626-2025 գրությամբ «2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագիծը և «2026 թվականի վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» **ամփոփաթերթն**

առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով կարծիքի էր ներկայացրել նաև Հանրային խորհրդի անդամներին:

Մասնավորապես, առաջարկություններ էին ներկայացրել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Ա. Մանուկյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանը և ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Հովակիմյանը, ինչով պայմանավորված վերոնշյալ գերատեսչությունների առաջարկությամբ հրավիրվել էին նաև տվյալ գերատեսչությունների աշխատակիցներ՝ արված առաջարկությունների քննարկման համար:

Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ Հանրային խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն **որոշեց** հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի վիճակագրական ծրագրի» նախագծին:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ՝ «Այլ հարցերի» շրջանակում.

Արմստատի նախագահ պարոն Ս. Մնացականյանը պատասխանեց Հանրային խորհրդի անդամների հարցերին:

Արմստատն իր պատրաստակամությունը հայտնեց նաև մասնակցելու Հանրային խորհրդի անդամների կողմից բարձրացված հարցերի քննարկումներին ոչ միայն Հանրային խորհրդի նիստերի ընթացքում, այլ ցանկացած ժամանակ և առաջարկվող ձևաչափով:

Նիստի եզրափակիչ խոսքով հանդես եկավ պարոն Ս. Մնացականյանը:

31.10.2025թ.

Հանրային խորհրդի նախագահ՝ Ա. Անանյան